ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Ոստիկանության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների (կոմպետենցիաների) անհրաժեշտ մակարդակից:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «մասնագիտական պահանջները» բառից հետո լրացնել «և հմտությունները (կոմպետենցիաները)» բառերը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ոստիկանության միջին խմբի պաշտոններում կարող են նշանակվել ստորև նշված անձինք՝ հետևյալ առաջնահերթությամբ՝

1) ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

2) Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կամ համապատասխան որակավորմամբ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստացած ծառայողները.

3) ոստիկանության միջին խմբի այլ պաշտոնից փոխադրվող (այդ թվում՝ առաջխաղացման կարգով) ոստիկանության ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

4) Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վճարովի հիմունքներով «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիները.

5) սույն հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված անձինք.

6) ոստիկանության կրտսեր խմբի պաշտոնից փոխադրվող ոստիկանության ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

7) տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և առաջին անգամ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները:

Սույն մասի 1-ին և 3-7-րդ կետերով նախատեսված դեպքերում անձն անցնում է պարտադիր վերապատրաստում, որի դրական արդյունքներով նշանակվում է պաշտոնի:».

2) ուժը կորցրած ճանաչել 6.2-6.3-րդ մասերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին և 7.2-րդ մասեր.

«7.1. Համայնքային ոստիկանի պաշտոնում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:

7.2. Ոստիկանության գվարդիայում ոստիկանության ծառայության պաշտոններում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում, իսկ շարքային կազմի ծառայողների դեպքում՝ նաև առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն, և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում անցել են «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով նախատեսված հատուկ պատրաստություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը ոստիկանության գվարդիայի միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:».

4) 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային

անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, վերջին հինգ տարիների ընթացքում սույն պարբերությամբ նախատեսված մարմիններում աշխատանքային հարաբերությունները դադարեցրած դատախազները, զինծառայողները, ծառայողները (բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված քաղաքացիների), ինչպես նաև վերջին տասը տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում համապատասխան (այդ թվում՝ նախկին) դատախազը, զինծառայողը, ծառայողը կամ ոստիկանության նախկին ծառայողն անցնում է առնվազն մեկամսյա պարտադիր վերապատրաստում, որի դրական արդյունքներով նշանակվում է պաշտոնի:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.2–րդ հոդվածով՝

«**Հոդված 14.2. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատումը**

1. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատումը ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթաց է, որն իրականացնում է ոստիկանության ծառայողի անմիջական ղեկավարը:

2. Ոստիկանության ծառայողի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր տարի (ընդհանուր գնահատական), որը կազմված է ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության գնահատականից (կատարողականի ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը), ծառայողների ֆիզիկական և կրակային պատրաստականության աստիճանը գնահատելու նպատակով անցկացված տարեկան ստուգարքի արդյունքներից:

3. Կատարողականի ընդհանուր գնահատականը հիմք է ոստիկանության ծառայողի վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու համար: Կատարողականի ընդհանուր գնահատականի՝

1) դրական արդյունքները հիմք են ոստիկանության ծառայողի՝

ա. խրախուսման համար.

բ. առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու համար.

2) բացասական արդյունքների դեպքում ոստիկանության ծառայողի առաջխաղացումը սահմանափակվում է:

4. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված եզրակացությունները կայացնելիս հաշվի է առնվում ատեստավորմանը նախորդած 3 տարիների կատարողականի ընդհանուր գնահատականների միջին թվաբանականը:

5. Կատարողականի ընդհանուր կամ ընթացիկ գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում ոստիկանության ծառայողը կարող է այն բողոքարկել Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվող հանձնաժողովին:

6. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատման կարգը, այդ թվում՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչները, կատարողականի գնահատականի դրական և բացասական արդյունքների չեմերը, կատարողականի գնահատականի դրական և բացասական արդյունքների հետևանքների կիրառման, վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու կանոնները, կատարողականի ընդհանուր կամ ընթացիկ գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում այն բողոքարկելու կարգը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը՝ հաշվի առնելով ոստիկանությունում ծառայության առանձնահատկությունները:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «պետի տեղակալների, ոստիկանության» բառերը փոխարինել «բարձրագույն (բացառությամբ ոստիկանության պետի),» բառերով:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանության բարձրագույն (բացառությամբ ոստիկանության պետի), գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատություններում ենթակա են պարտադիր վերապատրաստման տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է ոստիկանության ծառայողի տարեկան կատարողականի գնահատման վրա հիմնված՝ վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա: Վերապատրաստում կարող է անցնել նաև ոստիկանության պետը:»:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 1.2-րդ մասի «ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցվելու կամ հարուցված քրեական հետապնդումը» բառերը փոխարինել «հարուցված քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով» բառերով, իսկ «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կոպիտ խախտում կատարելու» բառերը փոխարինել «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված «ծառայության դադարեցում» կարգապահական տույժը կիրառված լինելու» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասը:

Հոդված 9. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ և 5-7-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Ոստիկանության այն ծառայողների ատեստավորման դեպքում, որոնք չեն բավարարում սույն օրենքի 5-րդ հոդվածով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացվող 14. 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանին, մինչև նշված պայմանի բավարարումը հիմք է ընդունվում ատեստավորմանը նախորդած ժամանակահատվածի կատարողականի ընդհանուր գնահատականների միջին թվաբանականը, բայց ոչ պակաս, քան առնվազն մեկ կիսամյակի կատարողականի միջին թվաբանականը: Առնվազն մեկ կիսամյակի կատարողականի միջին թվաբանականի բացակայության դեպքում, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված եզրակացությունները կայացնելիս, կատարողականի միջին թվաբանականը հաշվի չի առնվում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին անգամ ատեստավորում չանցած ոստիկանության ծառայողների առաջին անգամ ատեստավորումը, ինչպես նաև՝ առաջին անգամ ատեստավորում անցած ոստիկանության ծառայողների միայն հաջորդ ատեստավորումն անց է կացվում Լիազոր մարմնի ղեկավարի հաստատած ժամանակացույցի համաձայն:

4. Սույն օրենքով նախատեսված՝ բարձրագույն կրթություն ունենալու պահանջները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր մինչև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով ընդունելություն հայտարարելը ստացել են «Ոստիկանության գործ»

մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթություն կամ անցել են դրան համարժեք վերապատրաստում:

5. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածում լրացվող՝

1) 7.1-ին մասով նախատեսված կարգավորումները գործում են մինչև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով «Ոստիկանության գործ» մասնագիտության «Համայնքային ոստիկան» որակավորմամբ ընդունելություն հայտարարելը.

2) 7.2-րդ մասով նախատեսված կարգավորումները գործում են մինչև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով համապատասխան որակավորմամբ ընդունելություն հայտարարելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

~~1)~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Ոստիկանության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների (կոմպետենցիաների) անհրաժեշտ մակարդակից:»~~.~~

~~2) 3-րդ մասի «10-րդ մասի առաջին պարբերությամբ» բառերը փոխարինել «6-րդ մասի 5-րդ կետով» բառերով, իսկ «մասով» բառը փոխարինել «մասի 4-րդ կետով» բառերով~~:

Հոդված 2. Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «մասնագիտական պահանջները» բառից հետո լրացնել «և հմտությունները (կոմպետենցիաները)» բառերը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ոստիկանության միջին խմբի պաշտոններում կարող են նշանակվել ստորև նշված անձինք՝ հետևյալ առաջնահերթությամբ՝

1) ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

2) Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կամ համապատասխան որակավորմամբ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստացած ծառայողները.

3) ոստիկանության միջին խմբի այլ պաշտոնից փոխադրվող (այդ թվում՝ առաջխաղացման կարգով) ոստիկանության ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

4) Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վճարովի հիմունքներով «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիները.

5) ~~Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, ինչպես նաև վերջին հինգ տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն~~ սույն հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված անձինք.

6) ոստիկանության կրտսեր խմբի պաշտոնից փոխադրվող ոստիկանության ծառայողները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն.

7) տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և առաջին անգամ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները:

Սույն մասի 1-ին և 3-7-րդ կետերով նախատեսված դեպքերում անձն անցնում է պարտադիր վերապատրաստում, որի դրական արդյունքներով նշանակվում է պաշտոնի:».

2) ուժը կորցրած ճանաչել 6.~~1~~2-6.3-րդ մասերը~~, ինչպես նաև՝ 10-րդ մասի առաջին պարբերությունը~~.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին և 7.2-րդ մասեր.

«7.1. Համայնքային ոստիկանի պաշտոնում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:

7.2. Ոստիկանության գվարդիայում ոստիկանության ծառայության պաշտոններում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք,

որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում, իսկ շարքային կազմի ծառայողների դեպքում՝ նաև առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն, և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում անցել են «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով նախատեսված հատուկ պատրաստություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը ոստիկանության գվարդիայի միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:».

4) 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, վերջին հինգ տարիների ընթացքում սույն պարբերությամբ նախատեսված մարմիններում աշխատանքային հարաբերությունները դադարեցրած դատախազները, զինծառայողները, ծառայողները (բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված քաղաքացիների), ինչպես նաև վերջին տասը տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում համապատասխան (այդ թվում՝ նախկին) դատախազը, զինծառայողը, ծառայողը կամ ոստիկանության նախկին ծառայողն անցնում է առնվազն մեկամսյա պարտադիր վերապատրաստում, որի դրական արդյունքներով նշանակվում է պաշտոնի:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.2–րդ հոդվածով՝

«**Հոդված 14.2. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատումը**

1. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատումը ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթաց է, որն իրականացնում է ոստիկանության ծառայողի անմիջական ղեկավարը:

2. Ոստիկանության ծառայողի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր տարի (ընդհանուր գնահատական), որը կազմված է ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության գնահատականից (կատարողականի

ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը), ծառայողների ֆիզիկական և կրակային պատրաստականության աստիճանը գնահատելու նպատակով անցկացված տարեկան ստուգարքի արդյունքներից:

3. Կատարողականի ընդհանուր գնահատականը հիմք է ոստիկանության ծառայողի վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու համար: Կատարողականի ընդհանուր գնահատականի՝

1) դրական արդյունքները հիմք են ոստիկանության ծառայողի՝

ա. խրախուսման համար.

բ. առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու համար.

2) բացասական արդյունքների դեպքում ոստիկանության ծառայողի առաջխաղացումը սահմանափակվում է:

4. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված եզրակացությունները կայացնելիս հաշվի է առնվում ատեստավորմանը նախորդած 3 տարիների կատարողականի ընդհանուր գնահատականների միջին թվաբանականը:

5. Կատարողականի ընդհանուր կամ ընթացիկ գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում ոստիկանության ծառայողը կարող է այն բողոքարկել Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվող հանձնաժողովին:

6. Ոստիկանության ծառայողի կատարողականի գնահատման կարգը, այդ թվում՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոստիկանության ծառայողին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչները, կատարողականի գնահատականի դրական և բացասական արդյունքների շեմերը, կատարողականի գնահատականի դրական և բացասական արդյունքների հետևանքների կիրառման, վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու կանոնները, կատարողականի ընդհանուր կամ ընթացիկ գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում այն բողոքարկելու կարգը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը՝ հաշվի առնելով ոստիկանությունում ծառայության առանձնահատկությունները:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «պետի տեղակալների, ոստիկանության» բառերը փոխարինել «բարձրագույն (բացառությամբ ոստիկանության պետի),» բառերով:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանության բարձրագույն (բացառությամբ ոստիկանության պետի), գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները Հայաստանի

Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատություններում ենթակա են պարտադիր վերապատրաստման տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է ոստիկանության ծառայողի տարեկան կատարողականի գնահատման վրա հիմնված՝ վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա: Վերապատրաստում կարող է անցնել նաև ոստիկանության պետը:»:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 1.2-րդ մասի «ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցվելու կամ հարուցված քրեական հետապնդումը» բառերը փոխարինել «հարուցված քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով» բառերով, իսկ «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կոպիտ խախտում կատարելու» բառերը փոխարինել «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված «ծառայության դադարեցում» կարգապահական տույժը կիրառված լինելու» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասը:

Հոդված 9. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

Հոդված ~~8~~10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-~~ին կետի, 2~~-3-րդ և 5-7-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Ոստիկանության այն ծառայողների ատեստավորման դեպքում, որոնք չեն բավարարում սույն օրենքի 5-րդ հոդվածով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացվող 14. 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանին, մինչև նշված պայմանի բավարարումը հիմք է ընդունվում ատեստավորմանը նախորդած ժամանակահատվածի կատարողականի ընդհանուր գնահատականների միջին թվաբանականը, բայց ոչ պակաս, քան առնվազն մեկ կիսամյակի կատարողականի միջին թվաբանականը: Առնվազն մեկ կիսամյակի կատարողականի միջին թվաբանականի բացակայության դեպքում, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված եզրակացությունները կայացնելիս, կատարողականի միջին թվաբանականը հաշվի չի առնվում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին անգամ ատեստավորում չանցած ոստիկանության ծառայողների առաջին անգամ ատեստավորումը, ինչպես նաև՝ առաջին անգամ ատեստավորում անցած ոստիկանության ծառայողների միայն հաջորդ ատեստավորումն անց է կացվում Լիազոր մարմնի ղեկավարի հաստատած ժամանակացույցի համաձայն:

4. Սույն օրենքով նախատեսված՝ բարձրագույն կրթություն ունենալու պահանջները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր մինչև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով ընդունելություն հայտարարելը ստացել են «Ոստիկանության գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթություն կամ անցել են դրան համարժեք վերապատրաստում:

5. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածում լրացվող՝

1) 7.1-ին մասով նախատեսված կարգավորումները գործում են մինչև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով «Ոստիկանության գործ» մասնագիտության «Համայնքային ոստիկան» որակավորմամբ ընդունելություն հայտարարելը.

2) 7.2-րդ մասով նախատեսված կարգավորումները գործում են մինչև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով համապատասխան որակավորմամբ ընդունելություն հայտարարելը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1285-17.03.2026,06.04.2026-ՊԱ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ, 4-րդ հոդվածի 1-ին	Ներկայիս կարգավորումների համաձայն՝ ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

		կետով նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետ, ինչպես նաև՝ նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետ և նոր լրացվող 4-րդ կետ	ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, ինչպես նաև վերջին հինգ տարիների ընթացքում		

			ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ գործող օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Նախագծով նշված դրույթն ուժը կորցրած է ճանաչվում՝ այդ կատեգորիայի անձանց հնարավորություն տալով նշանակվել **միայն ոստիկանության միջին խմբի պաշտոններում:** Հաշվի առնելով **ՀՀ ՆԳՆ կողմից որդեգրված մոտեցումը՝ ոստիկանությունը հմուտ և որակյալ մասնագետներով համալրելու առումով**, անհրաժեշտ է ոչ միայն		

			պահպանել գործող կարգավորումը, այլև ընդլայնել վերոնշյալ կատեգորյայի անձանց շրջանակը: Մասնավորապես, հարկ է ոստիկանությունում ծառայության անցնելու հնարավորություն նախատեսել **նաև վերջին հինգ տարիների ընթացքում վերոնշյալ մարմիններում աշխատանքային հարաբերությունները դադարեցրած դատախազների, զինծառայողների և ծառայողների համար**, միաժամանակ՝ ոստիկանության նախկին		

			ծառայողների մասով սահմանված վերջին հինգ տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված լինելու ժամկետային պայմանը **երկարաձգել ևս հինգ տարով**: Առաջարկվող փոփոխություններով պայմանավորված՝ կարիք է առաջանում համարժեքորեն վերանայել նաև նախագծի՝ այդ կարգավորման հետ փոխկապակցված մյուս դրույթները ևս: Բացի այդ, նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով ուժը կորցրած են ճանաչվում գործող օրենքի 6.1-6.3-րդ մասերը: Այս առումով հարկ է		

			նշել, որ 6.2-րդ և 6.3-րդ մասերն ուժը կորցած ճանաչելն արդարացված է այն տեսանկյունից, դրանք ներկայումս այլևս չեն կարող կիրառվել, քանի որ, ըստ այդ դրույթները նախատեսող օրենքների անցումային լուծումների, այդպիսիք վերաբերում էին միայն համապատասխանաբար համայնքային ոստիկանությունում և քրեական ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու համար Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում արհեստագործական կրթական ծրագրի առաջին		

			հոսքի շրջանավարտներին: Մինչդեռ, 6.1-ին մասի կիրառումը պայմանավորված չէ անցումային նման դրույթով, հետևաբար, նպատակահարմար չէ դրա գործողության դադարեցումը: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի. 1) 1-ին հոդվածից հանել 2-րդ կետը. 2) 4-րդ հոդվածում՝ ա. 1-ին կետով նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպ. «5) սույն հոդվածի 10-րդ մասի առաջին		

			պարբերությամբ նախատեսված անձինք.». բ. 2-րդ կետից հանել «, ինչպես նաև՝ 10-րդ մասի առաջին պարբերությունը բառերը», իսկ «6.1» թիվը փոխարինել «6.2» թվով. 3) լրացնել 4-րդ կետ՝ գործող օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային		

			անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, վերջին հինգ տարիների ընթացքում սույն պարբերությամբ նախատեսված		

			մարմիններում աշխատանքային հարաբերությունները դադարեցրած դատախազները, զինծառայողները, ծառայողները (բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված քաղաքացիների), ինչպես նաև վերջին տասը տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Սույն պարբերությամբ		

			սահմանված դեպքում համապատասխան ծառայողը կամ ոստիկանության նախկին ծառայողն անցնում է պարտադիր վերապատրաստում, որի դրական արդյունքներով նշանակվում է պաշտոնի:»:		
2.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածում լրացվող 3-րդ կետ, 8-րդ հոդվածում (նոր համարակալմամբ՝ 10-րդ հոդվածում) լրացվող 5-րդ մաս	Ոստիկանությունը հմուտ և որակյալ մասնագետներով համալրելու տրամաբանության համատեքստում՝ մինչև ընդհանուր կանոններին համապատասխան կոնկրետ որակավորումներով ընդունելություն հայտարարելը, անհրաժեշտություն է առաջացել	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			ժամանակավորապես ընդլայնել նաև համայնքային ոստիկանությունում և ոստիկանության գվարդիայում ծառայության անցնելու պայմանները: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով՝ գործող օրենքի 14-րդ հոդվածը լրացնելով հետևյալ բովանդակությամբ 7.1-ին և 7.2-րդ մասերով. «7.1. Համայնքային ոստիկանի պաշտոնում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում և		

			Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:		

			7.2. Ոստիկանության գվարդիայում ոստիկանության ծառայության պաշտոններում, բացի սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված անձանցից, կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում, իսկ շարքային կազմի ծառայողների դեպքում՝ նաև առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն, և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում անցել են «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով նախատեսված հատուկ պատրաստություն:		

			Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը ոստիկանության գվարդիայի միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կարող է կատարվել նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:»: Զուգահեռաբար, նախագծի 8-րդ հոդվածը (նոր համարակալմամբ՝ 10-րդ հոդվածը) առաջարկում ենք լրացնել 5-րդ մասով՝ որպես անցումային լուծում		

			սահմանելով, որ վերոնշյալ 7.1.-ին և 7.2-րդ մասերով նախատեսված կարգավորումները գործում են մինչև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով համապատասխան որակավորումներով ընդունելություն հայտարարելը:		
3.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացվող նոր՝ 8-րդ հոդվածի 1-ին կետ	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1.2-րդ մասով դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարքի առնչությամբ ոստիկանության ծառայողի	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			նկատմամբ **ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցվելու** կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելու, ինչպես նաև՝ «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված **կոպիտ խախտում կատարելու դեպքում** վերջինս ազատվում է ոստիկանությունում ծառայությունից: Այս կապակցությամբ հատկանշական է այն հանգամանքը, որ նույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 3.1-ին կետով, սակայն,		

			ամրագրված է, որ ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը կատարել է դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարք, և նրա նկատմամբ առկա է ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Ստացվում է մի իրավիճակ, որ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում հարուցված չլինելու հանգամանքը խոչընդոտ չէ ծառայության անցնելու համար, այնինչ՝ նույն փաստը ծառայությունից ազատման հիմք է: Ուստի,		

			անհրաժեշտություն է առաջացել հրաժարվել նման տարբերակված մոտեցումից՝ ծառայությունից ազատման հիմքերի շարքից նույնպես հանելով վերոնշյալ իրավիճակը: Միաժամանակ, հարկ է նշել, որ ոստիկանությունում ծառայությունից անձն ազատվում է ոչ թե ինքնին կոպիտ խախտում կատարած լինելու փաստի ուժով, այլ՝ դրա վերաբերյալ իրականացված ծառայողական քննության արդյունքներով «ծառայության դադարեցում» կարգապահական տույժը կիրառված լինելու հիմքով:		

			Հետևապես, գործող օրինադրույթը համարժեքորեն վերանայման կարիք ունի նաև այդ տեսանկյունից: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծում լրացնել նոր 8-րդ հոդված և դրա 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 8.** Օրենքի 45-րդ հոդվածում՝ 1) 1.2-րդ մասի «ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցվելու կամ հարուցված քրեական հետապնդումը» բառերը փոխարինել «հարուցված քրեական		

			հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով» բառերով, իսկ «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կոպիտ խախտում կատարելու» բառերը՝ «ինչպես նաև «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված «ծառայության դադարեցում» կարգապահական		

			տույժը կիրառված լինելու» բառերով.»: Միաժամանակ, առաջարկում ենք համարժեքորեն վերանայել հոդվածների համարակալումը:		
4.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացվող նոր՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետ, ինչպես նաև՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացվող նոր՝ 3-րդ հոդված և նոր համարակալմամբ 5-րդ հոդված	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա ոստիկանության ծառայողը կարող է ոստիկանությունում ծառայությունից ազատվել գրավոր զեկուցագիրը ներկայացնելուց **ոչ շուտ, քան 30 օր հետո**: Նույնաբովանդակ կարգավորում	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			նախատեսված է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասում: Մեր դիտարկմամբ, **այս կարգավորումներն անհիմն սահմանափակում են անձի՝ աշխատանքի ազատ ընտրության սահմանադրորեն երաշխավորված իրավունքը**: Ուստի առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 8-րդ հոդվածի 2-րդ կետով ուժը կորցրած ճանաչել գործող		

			օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասը: Նույն տրամաբանությամբ՝ առաջարկում ենք «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել նոր՝ 3-րդ հոդվածով՝ ուժը կորցրած ճանաչելով գործող օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը: Միաժամանակ, նոր հոդվածների ավելացմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել նաև նախագծերի հոդվածների համարակալումը:		
5.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և	Չնայած այն հանգամանքին, որ 2025 թվականի նոյեմբեր ամսից այլևս ուժը կորցրել է	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	Արտյոմ Մեհրաբյան	փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացվող նոր՝ 9-րդ հոդված	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածը, այդուհանդերձ, նշված օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում շարունակում է պահպանվել հիշյալ հոդվածին արված հղումը: Նշված տեխնիկական խնդիրը շտկելու նպատակով առաջարկում ենք նախագծում լրացվող նոր՝ 9-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել գործող օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	
6.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ	Նախագծի 8-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 10-րդ հոդվածի) 1-ին մասով նախատեսվում է, որ այն ուժի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

	Արտյոմ Մեհրաբյան	կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 10-րդ հոդվածի) 1-ին մաս	մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի, 2-3-րդ և 5-7-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարվելիք փոփոխությունների և լրացումների արդյունքում վերանայվել են նախագծի հոդվածների համարակալումները՝ առաջարկում ենք շտկել նաև վերոնշյալ հղումը, մասնավորապես, նախագծի 8-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 10-րդ		

			հոդվածի) 1-ին մասում «1-ին հոդվածի 1-ին կետի, 2-3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:		
7.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի լրամշակված 1-ին հոդվածում լրացվող նոր՝ 1-ին և 2-րդ կետեր, ինչպես նաև՝ նոր լրացվող 4-րդ հոդված	«Փրկարար ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փրկարար ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն, ի թիվս այլ պահանջների, նաև այն քաղաքացիները, **ում 35 տարին չի լրացել դիմելու պահին**: Այս առումով հարկ է նկատել, որ փրկարար ծառայությունում ծառայության անցնելու տարիքային վերին շեմի սահմանման նպատակահարմարությունը	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			բացակայում է, քանի որ **առաջնային նշանակություն ունեն որակական չափանիշները**: Եթե անձն իր մասնագիտական կարողություններով, ֆիզիկական պատրաստականությամբ ու առողջական վիճակով համապատասխանում է սահմանված չափանիշներին, ապա տարիքը նման պարագայում չպետք է հանդիսանա որոշիչ չափանիշ, որը կխոչընդոտի փրկարար ծառայությունում ծառայության անցնելուն: Այս համատեքստում, հարկ է ընդգծել, որ բոլորովին վերջերս կատարված վերանայման արդյունքում՝		

			տարիքային շեմ սահմանող դրույթը հանվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքից: Վերոգրյալի հաշվառմամբ, այդ թվում՝ համակարգային միասնականության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք հրաժարվել վերը հիշատակված սահմանափակող դրույթից: Զուգահեռաբար, որպես առաջարկվող փոփոխության տրամաբանական շարունակություն, անհրաժեշտաբար կարիք կա վերանայելու նաև դրա հետ փոխկապակցված՝		

			տարիքային սահմանափակմանն առնչվող մնացյալ կարգավորումները, ներառյալ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատության սովորողների մասով: Ըստ այդմ, առաջարկում ենք՝ 1) նախագծի լրամշակված 1-ին հոդվածով գործող օրենքի 29-րդ հոդվածի՝ ա. 1-ին մասից հանել «, և դիմելու պահին չի լրացել վերջիններիս 35 տարին» բառերը. բ. 3-րդ մասից հանել «(այդ թվում՝ տարիքային)» բառերը,		

			2) նախագծի նոր լրացվող 4-րդ հոդվածով գործող օրենքի 70-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած, 2) 8-րդ մասից հանել «մինչև 30 տարեկանը լրանալը՝» բառերը:		
8.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի նոր համարակալմամբ 2-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1-ին և 3-րդ կետեր	«Փրկարար ծառայության մասին» օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասով ատեստավորում անցնելու համար բացառություն է նախատեսված Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների մասով: Այդ մոտեցման հաշվառմամբ՝ նույն հոդվածի	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			17-րդ մասով սահմանված է, որ հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոնի նշանակվելիս: Հարկ է նկատել, որ **վերոնշյալ կարգավորումները հակադրվում են ատեստավորման ինստիտուտի ներդրմամբ հետապնդվող նպատակի հետ՝ առանց հիմնավորման արգելափակելով Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում**		

			փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների՝ նշված սոցիալական երաշխիքից օգտվելու իրավունքի իրացումը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ **ոստիկանության ծառայողների մասով բացակայում է նման կարգավորումը**՝ այդ թվում համակարգային միասնականության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, առաջարկում ենք հրաժարվել վերը հիշատակված սահմանափակող դրույթներից:		

			Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի նոր համարակալմամբ 2-րդ հոդվածը տրոհել կետերի, մասնավորապես. 1) 1-ին կետով գործող օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասից հանել «(բացառությամբ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների)» բառերը, 2) 3-րդ կետով ուժը կորցրած ճանաչել գործող օրենքի 34.1-ին հոդվածի 17-րդ մասը:		
9.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր**	«Կատարողական վարույթի մասին» օրենքում փոփոխություն և լրացում	«Կատարողական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթը համալրվել է	**Ընդունվել է:**

	Արտյոմ Մեհրաբյան	կատարելու մասին» օրենքի նախագիծ	սահմանված է, որ անձի և տրանսպորտային միջոցների հետախուզումը հարկադիր կատարողի որոշման հիման վրա իրականացնում է **ոստիկանությունը**: Այս համատեքստում հարկ է նկատել, որ Ներքին գործերի նախարարությունում ընթացող բարեփոխումների շրջանակում կարևոր ուղղություններից մեկն է պետական այլ մարմինների և ոստիկանության լիազորությունների հստակ տարանջատումը, և **ոստիկանության կողմից բացառապես ոստիկանական բնույթի գործառույթներ իրականացնելով**	«Կատարողական վարույթի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով, որով կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

			պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցելը: Հատկանշական է, որ ոստիկանության բարեփոխումների շրջանակներում ևս, այս տրամաբանությանը համահունչ, պետության կողմից որդեգրվել է ռազմավարական մոտեցում առ այն, որ **պետք է ապահովվի ոստիկանության, որպես մասնագիտացված կառույցի, զարգացումը՝ վերջինիս թողնելով զուտ ոստիկանական գործառույթների իրականացումը**:		

			Այս կապակցությամբ անհրաժեշտ է շեշտել, որ պարտապան ֆիզիկական անձի (ներառյալ անհատ ձեռնարկատիրոջ) կամ պարտապան իրավաբանական անձի իրավասու անձի, ինչպես նաև՝ տրանսպորտային միջոցի հետախուզումը հարկադիր կատարողի հիմնական գործառույթներից է և, ըստ էության, կատարողական վարույթի ընթացիկ փուլում իրականացման ենթակա գործողություն է՝ որպես վարույթի անքակտելի բաղկացուցիչ: Մինչդեռ, ներկա դրությամբ հարկադիր կատարողի կողմից		

			կայացված համապատասխան որոշման հիման վրա հետախուզումն իրականացվում է ոստիկանության կողմից կամ այն անձանց ներգրավմամբ, որոնք ունեն համապատասխան գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա): Նման մոտեցումն անընդունելի է, մասնավորապես, հետևյալ պատճառաբանությամբ. - անձի կամ տրանսպորտային միջոցի հետախուզում հայտարարելը դեռևս բավարար հիմք չէ անձի ազատ տեղաշարժի կամ նրա նկատմամբ այլ		

			բնույթի սահմանափակումներ կիրառելու համար, ինչպես նաև՝ հետախուզումը չի ենթադրում որևէ հարկադրանքի միջոցի կիրառում, իսկ դրա միակ նպատակն անձի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի պարզումն է և դրա մասին Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը հայտնելը: Փաստացի, այդ ամենի հիման վրա գործնականում հետախուզական քարտ-կուտակիչը կազմելուց զատ, այլ հետախուզական աշխատանքներ չեն իրականացվում և նման գործառույթը ժամանակի և		

			ռեսուրսի ոչ արդյունավետ կիրառման է հանգեցնում: Ըստ էության, ոստիկանության կողմից անձի գտնվելու վայրը պարզվում է բացառապես այցելությունների և հարցումների միջոցով, իսկ տրասնպորտային միջոցինը՝ նաև իր գործառույթների իրականացման շրջանակներում այն հայտնաբերելու եղանակով, ինչը հնարավոր է իրականացնել նաև առանց հետախուզում հայտարարելու և քարտ-կուտակիչներ կազմելու: Ավելին, **նման գործառույթ կարող է իրականացվել, ըստ էության, ցանկացած**		

			մարմնի, ներառյալ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ ինքնուրույն: Ըստ այդմ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ոստիկանության գործառույթների տարանջատման անհրաժեշտությամբ պայմանավորված, առաջարկում ենք օրինագծերի փաթեթը համալրել նոր՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով՝ «Կատարողական վարույթի		

			մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը վերանայելով այն տրամաբանությամբ, որ անձի և տրանսպորտային միջոցների հետախուզումը հարկադիր կատարողի որոշման հիման վրա այսուհետ իրականացվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանության խնդիրներից ածանցվող գործառութային պարտականությունների իրացման շրջանակներում ոստիկանությունն օժտված է տրասնպորտային միջոցների		

			մասով լայն գործիքակազմով, առաջարկվում է լրացնել այդ տեսանկյունից Հարկադիր կատարման ծառայությանն օժանադակելու իրավական հնարավորություն նախատեսող կարգավորում առ այն, որ «Իր լիազորություններն իրականացնելիս սույն օրենքի իմաստով հետախուզվող տրանսպորտային միջոց հայտնաբերելու դեպքում՝ ոստիկանությունն իրավասու է իրականացնելու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված		

			գործողությունները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Ծառայությանը:»:		
10.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով «ծառայողական կարգապահության կանոններ» հասկացության իմաստը բացահայտված է, մասնավորապես, որպես **ենթաօրենսդրական նորմատիվ** իրավական ակտերով սահմանված ծառայողական պարտականություններ:	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթը համալրվել է «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով, որով կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանության ծառայողի ծառայողական պարտականությունները կարող են սահմանվել ոչ միայն ենթաօրենսդրական ակտերով, այլև՝ **օրենքով**, ինչպես նաև օրենքից ածանցվող **ոչ նորմատիվ բնույթի** ակտերով՝ անհրաժեշտ է օրենքի հիշյալ դրույթը վերանայել այնպես, որ դրա կիրառումը գործնականում չհանգեցնի ծառայողական քննության գործընթացի արգելափակման: Ներկայումս օրենքի 2-րդ հոդվածի ուժով ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և		

			հակակոռուպցիոն վարչությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվելուց առաջ թեկնածուները պարտադիր պետք է անցնեն բարեվարքության ուսումնասիրություն: Այս առումով նկատենք, որ 2026թ. մարտի 4-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և հարակից օրենքների փաթեթը, որով, ի թիվս այլնի, սահմանվել է բարեվարքության ուսումնասիրության ենթակա		

			անձանց մասով տրված խորհրդատվական եզրակացությունների **եզրափակիչ մասի հրապարակման պահանջ**: Հաշվի առնելով այն, որ նշված փաթեթով համանման փոփոխություն չի կատարվել «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքում՝ համարժեքորեն վերանայման կարիք ունի նաև հիշյալ օրենքի համապատասխան դրույթը: Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում Լիազոր մարմնի ուսումնական հաստատության առկա		

			ուսուցման ձևով սովորողների մասով օգտագործվում է **«կարգապահական խախտում» ձևակերպումը, որն էապես նեղ եզրույթ է՝ ի տարբերություն օրենքի իմաստով «խախտում» հասկացության**: Արդյունքում, օրինակ, ոստիկանության ծառայողի **վարքագծի կանոնների խախտման պարագայում բացակայում է սովորողի նկատմամբ ներգործելու իրավական հնարավորությունը**: Ուստի, քննարկվող դրույթը խմբագրման կարիք ունի՝ նշվածի համատեքստում:		

			Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե մինչև ծառայողական քննություն սկսելը պարզվել է, որ առկա է տվյալ ոստիկանության ծառայողի մասնակցությամբ կամ նրա կողմից կատարված ենթադրյալ հանցագործության դեպք, որն առերևույթ կարող է հանդիսանալ ծառայողական քննության առարկա, ապա ծառայողական քննություն սկսելը հետաձգվում է մինչև **համապատասխան քրեական վարույթի ավարտը:** Իր հերթին՝ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ ծառայողական քննություն		

			նշանակող անձը ամբողջությամբ կամ համապատասխան մասով կասեցնում է ծառայողական քննությունը, եթե ծառայողական քննություն նշանակելուց հետո պարզվել է, որ առկա է ոստիկանության տվյալ ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած՝ ծառայողական քննության առարկա հանդիսացող խախտման հետ կապված ենթադրյալ հանցագործության դեպք: Ընդ որում, այս դեպքում ևս, նույն տրամաբանությամբ, ծառայողական քննությունը կասեցվում է մինչև **համապատասխան**		

			քրեական վարույթի ավարտը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ քրեական վարույթով կարող են կայացվել ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ, սակայն այլ անձանց մասով **քրեական վարույթը շարունակվի**, մինչդեռ ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանումը, կաշկանդված լինելով հիշյալ դրույթով, չարդարացված կերպով ստիպված է լինելու ծառայողական քննություն սկսելու հարցին		

			անդրադառնալ քրեական վարույթի ավարտից հետո: Հետևապես, այս կարգավորումը ևս լավարկման կարիք ունի: Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ծառայողական քննության ժամկետները երկարաձգելու որոշումն ստանալուց հետո ծառայողական քննություն իրականացնողը երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ծառայողական քննության **կողմերին:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի իմաստով խախտում կատարելու մեջ կասկածվող ոստիկանության ծառայողից		

			բացի ծառայողական քննության կողմ է հանդիսանում **հենց համապատասխան որոշում կայացնողը**՝ վերջինիս իր իսկ կայացրած որոշման մասին տեղեկացնելն նպատակահարմար չէ: Ըստ այդմ, առաջարկում ենք օրինագծերի փաթեթը համալրել նոր՝ «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով՝ օրենքի՝ 1) 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «նորմատիվ հրամանով կամ այլ		

			ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը փոխարինել «հրամանով կամ այլ» բառերով. 2) 2-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս. «4. Իրավասու ստորաբաժանումում առաջին անգամ պաշտոնի նշանակվող թեկնածուի մասով սահմանված կարգով լիազոր մարմնի ղեկավարի կողմից համապատասխան պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ իրավական ակտը կայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լիազոր մարմնի ինտերնետային կայքում հրապարակվում է		

			նշանակված անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը: Անձի կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և տվյալ անձի գրավոր համաձայնության դեպքում հրապարակվում են նաև այդ առարկությունները:», 3) 14-րդ հոդվածի 1-ին մասում «Կարգապահական խախտման» բառերը փոխարինել «Խախտման» բառով, իսկ «կարգապահական խախտումների» բառերը՝ «խախտումների» բառով,		

			4) 22-րդ հոդվածի 5-րդ մասում, ինչպես նաև՝ 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «համապատասխան քրեական վարույթի ավարտը» բառերը փոխարինել «ոստիկանության տվյալ ծառայողի նկատմամբ վերջնական դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելը» բառերով, 5) 25-րդ հոդվածի 3-րդ մասում «ծառայողական քննության կողմերին» բառերը փոխարինել «խախտում կատարելու մեջ կասկածվող ոստիկանության ծառայողին» բառերով:		

11.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտյոմ Մեհրաբյան**	«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) գործող կարգավորումները վերջին տարիների կիրառման ընթացքում բացահայտել են մի շարք բացեր և հստակեցման անհրաժեշտություն ունեցող դրույթներ, որոնք խոչընդոտում են բռնության դեպքերին արդյունավետ և ժամանակին արձագանքելուն, ինչպես նաև՝ բռնության ենթարկված անձանց լիարժեք	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթը համալրվել է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով, որով կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			պաշտպանությանը: Մասնավորապես՝ 1) արձանագրվել են դեպքեր, երբ թոռան նկատմամբ կիրառված բռնությունը լիարժեք իրավական գնահատական չի ստացել՝ թոռն օրենքով սահմանված ընտանիքի անդամների սպառիչ շրջանակում ներառված չլինելու պատճառով: Ուստի, անհրաժեշտ է կատարել փոփոխություն այն տեսանկյունից, որ **օրենքի իմաստով ընդանիքի անդամ համարվի նաև թոռը,** ով փաստացի նույնպես կարող է գտնվել խոցելի վիճակում և ենթարկվել ընտանեկան կամ կենցաղային բռնության.		

			2) օրենքի կարգավորումների համաձայն՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության շրջանակներում ոստիկանության իրավասու ծառայողը լիազորված է՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ ընդունելու նախազգուշացման և անհետաձգելի միջամտության վերաբերյալ որոշումներ: Սակայն գործող կարգավորումներում բացակայում են նշված որոշումների ձևերը սահմանելու լիազորող նորմերը, ինչի հետևանքով		

			իրավակիրառ պրակտիկայում չեն ապահովվում վարչարարության միատեսակությունը և իրավական որոշակիությունը, ինչպես նաև՝ ստեղծվում են սուբյեկտիվ մոտեցումների և կամայական մեկնաբանությունների ռիսկեր, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բռնության ենթարկված անձանց պաշտպանության արդյունավետ իրականացման վրա: Այս կապակցությամբ անհրաժեշտ է **լիազորել Ներքին գործերի նախարարին՝ սահմանելու նախազգուշացում կիրառելու և անհետաձգելի**		

			միջամտության որոշումների ձևերը, 3) գործնականում ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ ահազանգերը թեև բազմազան են, բայց հաճախ ունեն կրկնվող բնույթ, մինչդեռ դրանց արձագանքելու ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունները կարող են էականորեն տարբերվել՝ պայմանավորված ծառայողի փորձով, սուբյեկտիվ գնահատմամբ կամ իրավիճակի ընկալմամբ: Նման տարբերակված մոտեցումները կարող են հանգեցնել իրավական		

			անորոշության, անհամաչափ միջամտության կամ հակառակը՝ բավարար պաշտպանության չապահովման, ինչը բացասաբար է անդրադառնում ինչպես բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության, այնպես էլ՝ ոստիկանության գործունեության արդյունավետության վրա: Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ նման խնդիրների հաղթահարման տարբերակներից մեկն առավել տարածված ահազանգերով ու դեպքերով համապատասխան		

			ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերի սահմանումն է: Ստանդարտ գործառնական ընթացակարգերի սահմանումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր առավել տարածված ահազանգի կամ իրավիճակի համար ամրագրել ոստիկանության ծառայողների գործողությունների հստակ հաջորդականություն, պարտադիր նվազագույն քայլեր, արձագանքման ժամկետներ և գործիքակազմ: Սա ապահովում է, որպեսզի անկախ ծառայողի անհատական փորձից կամ		

			այլ հանգամանքներից, յուրաքանչյուր նմանատիպ դեպք դիտարկվի և կարգավորվի նույն իրավական և գործնական չափանիշներով: Նման ընթացակարգերի առկայությունը հատկապես կարևոր է ընտանեկան և կենցաղային բռնության ոլորտում, որտեղ արձագանքման արագությունը, կանխատեսելիությունը և իրավաչափությունը կարող են անմիջականորեն ազդել անձի կյանքի, առողջության և արժանապատվության վրա: Ստանդարտ գործառնական ընթացակարգերը նվազեցնում են սխալների և		

			կամայական գործողությունների հավանականությունը, ապահովում են բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը և կանխում նրանց երկրորդային վնասումը: Ըստ այդմ՝ առաջարկում ենք **Ներքին գործերի նախարարին լիազորություն վերապահել՝ սահմանելու ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերը:**		

			Միաժամանակ, նպատակ ունենալով ապահովելու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց իրավունքների և անվտանգության համակարգված պաշտպանությունը, անհրաժեշտ է **ներդնել անվտանգային արձանագրության գործիքակազմ,** ինչը հնարավորություն է տալիս ոստիկանության իրավասու ծառայողին՝ փաստաթղթավորելու բռնության կրկնման կամ շարունակման առկա ռիսկերը, գնահատելու տվյալ իրավիճակում առկա վտանգների աստիճանը,		

			ինչպես նաև՝ սահմանելու այդ ռիսկերի նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումները: Նշված գործիքակազմի ներդրումը երաշխավորում է, որպեսզի բռնության ենթարկված անձի նկատմամբ կիրառվող պաշտպանական միջոցները ձևավորվեն ոչ թե իրավիճակային կամ սուբյեկտիվ գնահատումների հիման վրա, այլ՝ փաստագրված և հիմնավորված ռիսկերի գնահատման արդյունքներով: Սա կնպաստի իրավական որոշակիության ապահովմանը, ոստիկանության գործողությունների		

			միատեսակությանը և բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը: Բացի այդ, անվտանգային արձանագրությունը ծառայում է որպես գործիք՝ ապահովելու պետական մարմինների հաշվետվողականությունը և վերահսկելիությունը, ինչպես նաև՝ նվազեցնելու բռնության ենթարկված անձանց նկատմամբ երկրորդային վնասման և անբավարար պաշտպանության ռիսկերը: Արդյունքում, անվտանգային արձանագրության մեխանիզմի ներդրումը կհանդիսանա բռնության		

			կանխարգելման և բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը երաշխավորող կարևոր ինստիտուցիոնալ քայլ: Ըստ այդմ, առաջարկում ենք օրինագծերի փաթեթը համալրել նոր՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով՝ օրենքի՝ 1) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետում «պապը,»		

			բառից հետո լրացնել «թոռը,» բառը, 2) 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության մեջ «Նախազգուշացումը կիրառվում է» բառերը փոխարինել «Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը կայացնում և կիրառում է ոստիկանության իրավասու ծառայողը» բառերով և 3-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն. «Նախազգուշացում կիրառելու մասին որոշման ձևը սահմանում է ներքին գործերի նախարարը:»,		

			3) 7-րդ հոդվածում՝ ա. 1-ին մասի երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն. «Անհետաձգելի միջամտության որոշման ձևը սահմանում է ներքին գործերի նախարարը:», բ. 8-րդ մասից հանել երրորդ նախադասությունը. գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մաս. «8.1. Այն դեպքերում, երբ առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն և ընտանեկան և կենցաղային		

			բռնության ենթարկված անձը կամ նրա խնամքի տակ գտնվող անձը ոստիկանության իրավասու ծառայողին հայտնում է ապաստարանում տեղավորվելու իր ցանկության մասին, ոստիկանության իրավասու ծառայողը միջոցներ է ձեռնարկում նրանց ապաստարան տեղափոխելու ուղղությամբ, չի հեռանում մինչև նրանց կողմից բնակության վայրից անձնական իրերը հավաքելը և կազմում է անվտանգային արձանագրություն, որի մեջ նշվում են՝ բռնության կրկնման կամ շարունակման առկա ռիսկերը և դրանց նվազեցմանն ու		

			կանխարգելմանն ուղղված միջոցները: Անվտանգային արձանագրության ձևը սահմանում է ներքին գործերի նախարարը:»,		
			4) 15-րդ հոդվածի 1-ին մասում՝		
			ա. 3-րդ կետի «սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապաստարանում տեղավորելու մասին» բառերը փոխարինել «միջոցներ է ձեռնարկում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց կամ նրանց խնամքի տակ գտնվող		

			անձանց ապաստարան տեղափոխելու ուղղությամբ». բ. 7-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ. «8) սահմանում է ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերը:»:		
12.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր**	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ	Չնայած այն հանգամանքին, որ «Օպերատիվ-հետախուզական	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթը համալրվել է «Օպերատիվ-	**Ընդունվել է:**

	Արտյոմ Մեհրաբյան	կատարելու մասին» օրենքի նախագիծ	գործունեության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն օժտված է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավազորությամբ՝ իր կառուցվածքային ստորաբաժանումների և ենթակա պետական մարմինների աշխատողների նկատմամբ, այդուհանդերձ, ներկայիս կարգավորումներով ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումն իրավասու չէ՝ իրականացնելու	հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով, որով կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

			«նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում» և «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ հիշյալ ստորաբաժանման գործունեության նպատակներից է՝ բացահայտել և խափանել ծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունները, այդ թվում՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները: Այս		

			առումով, ստորաբաժանման գործառույթների արդյունավետ իրականացման համատեքստում, առանձնահատուկ նշանակություն ունեն, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ և 435-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները, որոնք իրենց բնույթով կարող են ուղղակիորեն առնչվել ծառայողական դիրքի չարաշահման, պաշտոնեական լիազորությունների անցման կամ ծառայողական այլ ծանր իրավախախտումների հետ: Ստացվում է մի իրավիճակ, որ, օրինակ, վերոնշյալ ստորաբաժանումը		

			կարող է ունենալ բավարար տվյալներ այն մասին, որ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ծառայողի գործողությունները կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության հատկանիշներ, սակայն համապատասխան գործիքակազմի բացակայությամբ պայմանավորված՝ խոչընդոտվի ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը: Այլ կերպ ասած՝ առկա է իրավական անհամապատասխանություն,		

			մասնավորապես, մի կողմից Օրենքը նախատեսում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման հնարավորություն, մյուս կողմից՝ ստորաբաժանումը զրկված է այդ նպատակին հասնելու արդյունավետ օպերատիվ գործիքներից: Հետևաբար, անհրաժեշտ է Օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ վերը հիշատակված ստորաբաժանմանը վերապահելով նման իրավասություն: Ընդ որում, հարկ է ընգծել, որ այս առաջարկության նպատակը ոչ թե ստորաբաժանման		

			կողմից կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակի ընդլայնումն է, այլ՝ գործող կարգավորման ներքին համակարգայնության ապահովումը և իրավական բացի վերացումը: Ըստ այդմ, առաջարկում ենք օրինագծերի փաթեթը համալրել նոր՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով՝ օրենքի՝ 1) 14-րդ հոդվածի 2.2-րդ մասում «10-րդ,» բառից հետո լրացնել «11-րդ, 12-րդ,» բառերը. 2) 31-րդ հոդվածում՝		

			ա. 1-ին մասում «վերահսկումը» բառից հետո լրացնել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի,» բառերը, իսկ «տրամադրումով,» բառից հետո լրացնել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի,» բառերը. 2) 3-րդ մասում «նամակագրության,» բառից հետո լրացնել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը,» բառերը:		
13.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր**	«Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Գործող օրենքի կարգավորումների համաձայն՝ օտարերկրացիների մուտքը և	**Ընդունվել է:** Նախագծերի փաթեթը համալրվել է «Օտարերկրացիների	**Ընդունվել է:**

	Արտյոմ Մեհրաբյան		ելքը ՀՀ թույլատրվում է **միայն անձը հաստատող վավեր փաստաթղթի առկայության պարագայում**: Հարկ է նկատել, սակայն, որ լինում են դեպքեր, երբ հետախուզման մեջ գտնվող անձը, որի նկատմամբ ՀՀ տարածքում նախաձեռնված է քրեական վարույթ և որին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք, հայտնաբերվում է օտարերկրյա պետության տարածքում, հետագայում վերջինիս հանձնումը ՀՀ-ին բավարարվում է տվյալ պետության իրավասու մարմնի կողմից, ոստիկանության կողմից տվյալ անձը տեղափոխվում է	մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով, որով կատարվել են համապատասխան փոփոխությունները:	

			ՀՀ՝ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժն ի կատար ածելու համար, սակայն անձը հաստատող վավեր փաստաթղթի բացակայության պատճառով ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից նրա մուտքը ՀՀ չի թույլատրվում, ինչի հետևանքով ենթադրյալ հանցանք կատարելու մեջ մեղադրվող կամ արդեն իսկ դատապարտված անձը խուսափում է քրեական պատասխանատվությունից և պատժից, իսկ նախաձեռնված քրեական վարույթի կամ արդեն իսկ կայացված		

			դատավճիռն ի կատար ածելու հարցը մնում է չլուծված: Հարկ է նշել, որ նույն տրամաբանությամբ՝ անձը հաստատող վավեր փաստաթղթի բացակայության պարագայում չի թույլատրվում նաև ՀՀ-ի կողմից օտարերկրյա պետության իրավապահ մարմիններին հանձնման ենթակա անձի ելքը ՀՀ պետական սահմանով, ինչը խոչընդոտում է ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Բացի այդ, նման իրավիճակներում, ըստ էության, օրենքով		

			ոստիկանությանը պատվիրակված լիազորությունը, այն է՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնել քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց հետախուզում, դառնում է առարկայազուրկ: Նշված խնդրի հաղթահարման նպատակով անհրաժեշտ է «Օտարերկրացիների մասին» օրենքի վերաբերելի դրույթներում լրացնել այնպիսի կարգավորումներ, որոնք կապահովեն իրավական հնարավորություն՝ վերոնշյալ կատեգորիայի անձանց մուտքն ու ելքը Հայաստանի		

			Հանրապետության պետական սահմանի անցման կետերով իրականացնելու համար: Ըստ այդմ, առաջարկում ենք օրինագծերի փաթեթը համալրել նոր՝ «Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով՝ օրենքի՝ 1) 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով. «8. Սույն հոդվածով սահմանված դրույթները չեն կիրառվում առանց վավերական անձնագրի, մուտքի վիզայի կամ կացության իրավունքը հավաստող փաստաթղթի՝		

			հետախուզվող օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերով մուտքի դեպքում: Նշված անձինք Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատում են հանձման գործերով իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը տրված գրությամբ, որին կցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից կազմված և օտարերկրացու լուսանկարը ներառող փաստաթուղթ»,		

			2) 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. «5. Սույն հոդվածով սահմանված դրույթները չեն կիրառվում առանց վավերական անձնագրի, մուտքի վիզայի կամ կացության իրավունքը հավաստող փաստաթղթի՝ հետախուզվող օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերով ելքի դեպքում: Նշված անձինք Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատում են հանձման գործերով իրավասու մարմնի կողմից Հայաստանի		

			Հանրապետության ոստիկանությանը տրված գրությամբ, որին կցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից կազմված և օտարերկրացու լուսանկարը ներառող փաստաթուղթ:»:		
14.	**ՀՀ կառավարություն**	««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-296-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» և ««Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2025	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-296-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի վերնագրում առաջարկում ենք նշել օրենքի կրճատ անվանումը՝ հիմք ընդունելով	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

		թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-295-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքների նախագծերի վերնագրեր և 1-ին հոդվածներ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված դրույթը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի՝ սույն օրենքի սահմանված կրճատ անվանումը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է օրենքի կրճատ		

			անվանման հիշատակման կանոնը, այն է՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-295-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի վերնագրին: Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները		

			կատարվում են նրա առանձին հոդվածի գործողությունը դադարեցնելու միջոցով: Իսկ նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտի, բացառությամբ Սահմանադրության, գործողությունը դադարեցվում է նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված՝ նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ կանոնները կիրառվում են նաև դրանց մասերի գործողությունների		

			դադարեցման ժամանակ: Ուստի նորմատիվ իրավական ակտի հոդվածի գործողության դադարեցումը նշված հոդվածը չեղյալ ճանաչելու միջոցով նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխություն է: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-296-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ՕՐԵՆՔԸ		

			ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերը փոխարինել «ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերով: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-295-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի վերնագրին: «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու		

			մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-296-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում օրենքի լրիվ անվանման հիշատակումից առաջարկում ենք հանել «թիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը, որի համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,		

			հերթական համարը և «օրենք» բառը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀՕ-295-Ն օրենքը մասնակի չեղյալ ճանաչելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում օրենքի լրիվ անվանման հիշատակմանը:		